

Ե Ր Կ Ի Ր Հ Ա Յ Ր Ե Ն Ի

Գրեց՝ ՅԱԿԱՆ ՇՈՂԵՆՑ

Ես սիրում եմ հեզ, հայրենի երկի՛ր,
Մայր իմ հարազատ, անուշ Հայաստան
Կեանքս բողբոջեց քո ոսկե հերկից
Եւ տուեցի՛ր ինձ երազներ այնքան...

Եւ դրանից չէ արդե՛՛հ իմ արժ
Կարո՞սն ու սէրը այնքան անսահման,
Որով ես անան գնացի մարտի—
Յիշելով լուսյլ սարերից մահուան:

Արդե՛՛հ քո պայծառ ոգի՞ն չէր այն մեծ,
Որ դարձել էր ինձ անդուլ դեկավար,—
Եւ Բանի՛ անգամ նա ոգեհեղեղեց
Ինձ ծա՛նր-ծա՛նր պահերին խաւար...

Եւ քո բարբառը հնչել է իմ մէջ,
Ինչպէս դիւքական զանգերի ղողանջ.
Եւ քո նայիրեան արեւն է անեղջ
Փայլում երկնում իմ լուսահամանջ:

Հիմա էլ նա է ինձ առաջնորդում
Անեղ փորձութեան ու երգի ժամին,—
Եւ նանապարհն իմ այդ դու ես հարթում
Դէպի երջանիկ հեռուն գալիքի...

5/10/1944